ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Ճշգրտվող տոկոսադրույքի սահմանման և հաշվարկման

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Ճշգրտվող տոկոսադրույքը «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Բանկ») կողմից տրամադրվող ֆինանսավորումների հաստատուն անվանական տոկոսադրույք է, որը ֆինանսավորման պայմանագրի գործողության որևէ ժամանակահատվածում կարող է ճշգրտվել՝ բարձրանալ կամ նվազել:

1.2. Ճշգրտվող տոկոսադրույքը Բանկում սահմանվում է ըստ արժույթների (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո) և կարող է կիրառվել անհատական ու կորպորատիվ ֆինանսավորումների համար:

2. ՃՇԳՐՏՎՈՂ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳ

2.1. Ճշգրտվող տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$S = Բ + Հ,$$

որտեղ՝

S – Ճշգրտվող տոկոսադրույք,

Բ – Բազային տոկոսադրույք,

Հ – Հավելադիր:

2.2. Բազային տոկոսադրույքի հիմքում, բացառությամբ Ընթացակարգի 4.1 կետում նշված դեպքերի, ընկած է մեկ հիմնական ցուցանիշ (այսուհետ՝ «Հիմնական ցուցանիշ») և մեկ երկրորդային ցուցանիշ (այսուհետ՝ «Երկրորդային ցուցանիշ»), որոնք ֆինանսավորման պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում չեն կարող փոփոխվել:

2.3. Բազային տոկոսադրույքը հաշվարկվում և սահմանվում է՝ հիմք ընդունելով Հիմնական ցուցանիշը:

2.4. Բազային տոկոսադրույքի հաշվարկման և սահմանման նպատակով Երկրորդային ցուցանիշը կիրառվում է այն դեպքում, երբ Ճշգրտվող տոկոսադրույքը հաջորդ ժամանակահատվածի համար սահմանելիս Հիմնական ցուցանիշն անհասանելի է, և այս պարագայում Ճշգրտվող տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$S = Բ + Հ + Գ_{ՀԵ},$$

որտեղ՝

S – Ճշգրտվող տոկոսադրույք,

Բ – Բազային տոկոսադրույք,

Հ – Հավելադիր,

$Գ_{ՀԵ}$ – Հիմնական և Երկրորդային ցուցանիշները ճշգրտող գործակից, որը հաշվարկվում է որպես Բազային տոկոսադրույքի Հիմնական և Երկրորդային ցուցանիշների միաժամանակյա հասանելի վերջին 6 /վեց/ ամիսների պարզ թվաբանական միջինների (կլորացված 0.25 /զրո ամբողջ քսանհինգ հարյուրերորդական/ տոկոսային կետի ճշգրտությամբ) տարբերություն:

2.5. Բազային տոկոսադրույքի Հիմնական ցուցանիշը, կախված ֆինանսավորման արժույթից, որոշվում է հետևյալ շուկայական տոկոսադրույքների միջոցով՝

2.5.1. **ՀՀ դրամով** Բազային տոկոսադրույքի համար Հիմնական ցուցանիշ (այսուհետ՝ «ՀՀ դրամով հիմնական ցուցանիշ») է համարվում ՀՀ պետական արժեկտրոնային պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի 6 /վեց/ ամիս ժամկետայնությամբ եկամտաբերությունը:

2.5.1.1. **ՀՀ դրամով հիմնական ցուցանիշի** վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է ՀՀ ԿԲ պաշտոնական կայքում:

2.5.2. **ԱՄՆ դոլարով** Բազային տոկոսադրույքի համար Հիմնական ցուցանիշ (այսուհետ՝ «ԱՄՆ դոլարով հիմնական ցուցանիշ») է համարվում ԱՄՆ դոլարով 6 /վեց/ ամիս ժամկետայնությամբ ժամկետային ապահովված օվերնայթ ֆոնդային տոկոսադրույքը (CME Term SOFR USD 6 Month):

2.5.2.1. **ԱՄՆ դոլարով հիմնական ցուցանիշի** վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է՝

- «CME Group»-ի պաշտոնական կայքում,
- «Bloomberg Terminal» համակարգում «TSFR6M» հղմամբ,
- «Refinitiv Eikon» համակարգում՝ «SR6M» հղմամբ:

2.5.3. **Եվրոյով** Բազային տոկոսադրույքի համար Հիմնական ցուցանիշ (այսուհետ՝ «Եվրոյով հիմնական ցուցանիշ») է համարվում Եվրոյով 6 /վեց/ ամիս ժամկետայնությամբ եվրոպական միջբանկային առաջարկի տոկոսադրույքը (EURIBOR 6 Month):

2.5.3.1. **Եվրոյով հիմնական ցուցանիշի** վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է՝

- «Euribor»-ի պաշտոնական կայքում,
- «Bloomberg Terminal» համակարգում «EUR006M» հղմամբ,
- «Refinitiv Eikon» համակարգում՝ «EURIBOR6MD» հղմամբ:

2.6. Բազային տոկոսադրույքի Երկրորդային ցուցանիշը, կախված ֆինանսավորման արժույթից, որոշվում է հետևյալ շուկայական տոկոսադրույքների միջոցով՝

2.6.1. **ՀՀ դրամով** Բազային տոկոսադրույքի համար Երկրորդային ցուցանիշ (այսուհետ՝ «ՀՀ դրամով երկրորդային ցուցանիշ») է համարվում ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ ֆիզիկական անձանցից ՀՀ դրամով ներգրավված՝ 91 /իննսունմեկ/ օրից մինչև 180 /հարյուր ութսուն/ օր, և 181 /հարյուր ութսունմեկ/ օրից մինչև 1 /մեկ/ տարի ժամկետայնությամբ ավանդների միջին կշռված տոկոսադրույքների պարզ թվաբանական միջինը:

2.6.1.1. **ՀՀ դրամով երկրորդային ցուցանիշի** վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է ՀՀ ԿԲ պաշտոնական կայքում:

2.6.2. **ԱՄՆ դոլարով** Բազային տոկոսադրույքի համար Երկրորդային ցուցանիշ (այսուհետ՝ «ԱՄՆ դոլարով երկրորդային ցուցանիշ») է համարվում ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի եկամտաբերության կորի 6 /վեց/ ամիս ժամկետայնությամբ եկամտաբերությունը:

2.6.2.1. **ԱՄՆ դոլարով երկրորդային ցուցանիշի** վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է՝

- «U.S. Department of the Treasury»-ի պաշտոնական կայքում,
- «Bloomberg Terminal» համակարգում «H15T6M» հղմամբ,
- «Refinitiv Eikon» համակարգում՝ «US6MT» հղմամբ:

2.6.3. **Եվրոյով** Բազային տոկոսադրույքի համար Երկրորդային ցուցանիշ (այսուհետ՝ «Եվրոյով երկրորդային ցուցանիշ») է համարվում Գերմանիայի՝ եվրոյով պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի 6 /վեց/ ամիս ժամկետայնությամբ եկամտաբերությունը:

2.6.3.1. **Եվրոյով երկրորդային ցուցանիշի** վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է՝

- «Bloomberg Terminal» համակարգում «YCGT0016» հղմամբ,
- «Refinitiv Eikon» համակարգում՝ «DE6MT» հղմամբ:

2.7. Ընթացակարգի 2.5 և 2.6 կետերում նշված հղումների փոփոխումը որևէ ազդեցություն կամ հետևանք չի կարող ունենալ Ընթացակարգի և/կամ նրա գործողության հանդեպ:

2.8. Եթե 2.5 և 2.6 կետերում սահմանված տեղեկատվության ստացումը մատչելի չէ վարկառուին, ապա Բանկը պարտավոր է վարկառուի պահանջով վերջինիս տրամադրել այդ տեղեկատվությունը՝ վարկառուի

էլեկտրոնային փոստի հասցեին և/կամ Բանկի և վարկառուի համար ընդունելի այլ էլեկտրոնային կապուղիների միջոցով ուղարկելով և/կամ Բանկի տարածքում առձեռն հանձնելով:

2.9. Բազային տոկոսադրույքը, անկախ ֆինանսավորման արժույթից, հաշվարկվում է որպես դրա հիմքում ընկած և կիրառվող ցուցանիշի՝ տվյալ ժամանակահատվածի վերջին վեց ամիսների պարզ թվաբանական միջին, իսկ հաշվարկներն իրականացվում են մաթեմատիկական կլորացման կանոններով՝ 0.25 /զրո ամբողջ քսանհինգ հարյուրերորդական/ տոկոսային կետի ճշգրտությամբ, օրինակ՝ 7.88%-ը և 8.10%-ը կդիտվեն որպես 8.00%, իսկ 8.13%-ը և 8.37%-ը կդիտվեն որպես 8.25%:

2.10. Այն պարագայում, երբ Բազային տոկոսադրույքը բացասական մեծություն է, Ճշգրտվող տոկոսադրույքի հաշվարկման համար հիմք է ընդունվում Բազային տոկոսադրույքի 0 /զրո/ արժեքը:

2.11. Բազային տոկոսադրույքի հաշվարկման մեթոդը չի կարող փոփոխվել ֆինանսավորման պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում:

2.12. Հավելադիրը սահմանվում է ֆինանսավորման պայմաններով և ամրագրվում է ֆինանսավորման յուրաքանչյուր պայմանագրի դեպքում առանձին՝ հիմք ընդունելով ֆինանսավորման տրամադրման վերաբերյալ Բանկի իրավասու մարմնի որոշումը:

2.13. Հավելադիրը ֆինանսավորման պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում հաստատուն է և ենթակա չէ փոփոխման:

3. ՃՇԳՐՏՎՈՂ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳ

3.1. Բազային տոկոսադրույքի հաշվարկն իրականացվում է տարեկան երկու անգամ:

3.2. Բազային տոկոսադրույքի սահմանման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 25-ը և օգոստոսի 25-ը: Ընդ որում՝

3.2.1. փետրվարի 25-ին սահմանվող Բազային տոկոսադրույքի համար հիմք է ընդունվում տվյալ տարվա փետրվարի 15-ի (ոչ աշխատանքային օր լինելու պարագայում՝ փետրվարի 15-ին հաջորդող աշխատանքային օրվա) դրությամբ հաշվարկված Բազային տոկոսադրույքի արժեքը և գործող Բազային տոկոսադրույքը,

3.2.2. օգոստոսի 25-ին սահմանվող Բազային տոկոսադրույքի համար հիմք է ընդունվում տվյալ տարվա օգոստոսի 15-ի (ոչ աշխատանքային օր լինելու պարագայում՝ օգոստոսի 15-ին հաջորդող աշխատանքային օրվա) դրությամբ հաշվարկված Բազային տոկոսադրույքի արժեքը և գործող Բազային տոկոսադրույքը:

3.3. Թե բարձրացման, թե նվազեցման դեպքում Բազային տոկոսադրույքը՝

3.3.1. ենթակա է Բանկի կողմից պարտադիր փոփոխման, եթե տվյալ ժամանակահատվածի համար հաշվարկված բազային տոկոսադրույքի և գործող Բազային տոկոսադրույքի տարբերությունը կազմում է 1 (մեկ) տոկոսային կետից ավելի: Բազային տոկոսադրույքը կարող է փոփոխվել ավելի փոքր չափով, քան հաշվարկված և գործող Բազային տոկոսադրույքի տարբերությունն է, բայց ոչ պակաս, քան 0.25 (զրո ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) տոկոսային կետը: Օրինակ, եթե գործող Բազային տոկոսադրույքը 9.00% է, իսկ հաշվարկված նոր տոկոսադրույքը՝ 10.50%, ապա Բանկը կարող է փոփոխել տոկոսադրույքը 0.25 կամ 0.50 կամ 0.75 կամ 1.00 կամ 1.25 կամ 1.50 տոկոսային կետի չափով:

3.3.2. կարող է փոփոխվել, եթե տվյալ ժամանակահատվածի համար հաշվարկված տոկոսադրույքի և գործող Բազային տոկոսադրույքի տարբերությունը չի գերազանցում 1 (մեկ) տոկոսային կետը: Բազային տոկոսադրույքը կարող է փոփոխվել ավելի փոքր չափով, քան հաշվարկված բազային

տոկոսադրույքի և գործող Բազային տոկոսադրույքի տարբերությունն է, բայց ոչ պակաս, քան 0.25 (զրո ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) տոկոսային կետ: Օրինակ, եթե գործող Բազային տոկոսադրույքը 9.00% է, իսկ հաշվարկված նոր տոկոսադրույքը՝ 8.00%, ապա Բանկը կարող է փոփոխել տոկոսադրույքը 0.25 կամ 0.50 կամ 0.75 կամ 1.00 տոկոսային կետի չափով:

3.4. Ճշգրտվող տոկոսադրույքի բարձրացման և նվազեցման առավելագույն շեմերը սահմանվում են Բանկի Տնօրինության համապատասխան որոշումներով:

3.4.1. «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված ֆինանսավորումների Ճշգրտվող տոկոսադրույքի բարձրացման առավելագույն շեմը չի կարող գերազանցել տոկոսադրույքի նվազեցման առավելագույն շեմը:

3.5. Վարկառուի համաձայնության առկայության դեպքում հօգուտ վարկառուի Ճշգրտվող տոկոսադրույքի փոփոխումը Բանկն իրավունք ունի իրականացնելու ցանկացած պահին և հաճախականությամբ:

3.6. Ֆինանսավորման պայմանագրերի կնքման համար Բազային տոկոսադրույք է համարվում ֆինանսավորման վերաբերյալ որոշման կայացման ամսաթվի դրությամբ Բանկում գործող Բազային տոկոսադրույքը:

3.7. Յուրաքանչյուր սահմանման ամսաթվից մինչև հաջորդ սահմանման ամսաթիվը Բազային տոկոսադրույք է համարվում սահմանման տվյալ ամսաթվի դրությամբ գործող Բազային տոկոսադրույքը:

3.8. Ճշգրտվող տոկոսադրույքի առաջին վերանայումը՝ բացառությամբ Ընթացակարգի 3.5 կետում նշված դեպքի՝ Ընթացակարգի 1.2. կետով սահմանված Ֆինանսավորման պայմանագրի համար տեղի է ունենում տվյալ ֆինանսավորման պայմանագրով սահմանված պահին, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

3.9. Ճշգրտվող տոկոսադրույքի երկրորդ և հետագա վերանայումներն իրականացվում են յուրաքանչյուր 6 /վեց/ ամիսը մեկ՝ բացառությամբ Ընթացակարգի 3.5 կետում նշված դեպքի:

3.10. Ճշգրտվող տոկոսադրույքի փոփոխությունները.

3.10.1. «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված ֆինանսավորումների դեպքում կարող են կիրառվել ոչ շուտ, քան վարկառուին տեղեկացնելուց 7 /յոթ/ աշխատանքային օր հետո:

3.10.2. Սպառողական և այլ անհատական ֆինանսավորումների դեպքում կարող են կիրառվել ոչ շուտ, քան վարկառուին տեղեկացնելուց 7 /յոթ/ աշխատանքային օր հետո, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

3.10.3. Կորպորատիվ վարկային պայմանագրերի դեպքում կարող է կիրառվել վարկառուի հետ կնքված պայմանագրով սահմանված կարգի համաձայն:

3.11. Ճշգրտվող տոկոսադրույքի կիրառման հետ կապված կարգավորումները սահմանվում են Բանկի Տնօրինության համապատասխան որոշումներով:

3.12. Բազային տոկոսադրույքները սահմանվում են Բանկի Տնօրինության որոշմամբ, իսկ փոփոխված Բազային տոկոսադրույքը և դրա փոփոխության մասին հայտարարությունը տեղադրվում են Բանկի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ յուրաքանչյուր 6 /վեց/ ամիսը մեկ՝ փետրվար և օգոստոս ամսվա 25-ին (ոչ աշխատանքային օր լինելու պարագայում՝ դրանց հաջորդող աշխատանքային օրը) և հասանելի են Բանկի տարածքում:

4. ՃՇԳՐՏՎՈՂ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԲԱՑԱՌԻԿ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

4.1. Ճշգրտվող տոկոսադրույքը անհասանելի և հաջորդ ժամանակահատվածում սահմանելու համար անհնարին է համարվում, եթե Բազային տոկոսադրույքի սահմանման հիմքում ընկած հիմնական և երկրորդային ցուցանիշները միաժամանակ անհասանելի են (չեն հրապարակվում):

4.2. Ընթացակարգի 4.1. կետում սահմանված դեպքում Ճշգրտվող տոկոսադրույքը սահմանելու նպատակով Բանկը՝ հիմք ընդունելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշները, Բազային տոկոսադրույքի հաշվարկման և սահմանման համար ընտրում է Հիմնական և Երկրորդային ցուցանիշներին համանման այլ ցուցանիշ (այսուհետ՝ «Համանման ցուցանիշ») և Բազային տոկոսադրույքը հաջորդ ժամանակաշրջանի համար որոշվում է՝ հիմք ընդունելով Համանման ցուցանիշը:

4.2.1. Եթե Համանման ցուցանիշին անցումը տեղի է ունենում Հիմնական ցուցանիշից, ապա Ճշգրտվող տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Տ} = \text{Բ} + \text{Հ} + \text{Գ}_{\text{ՀՀ}},$$

որտեղ՝

Տ – Ճշգրտվող տոկոսադրույք,

Բ – Բազային տոկոսադրույք,

Հ – Հավելադիր,

$\text{Գ}_{\text{ՀՀ}}$ – Հիմնական և Համանման ցուցանիշները ճշգրտող գործակից, որը հաշվարկվում է որպես Բազային տոկոսադրույքի Հիմնական և Համանման ցուցանիշների միաժամանակյա հասանելի վերջին 6 /վեց/ ամիսների պարզ թվաբանական միջինների (կլորացված 0.25 /զրո ամբողջ քսանհինգ հարյուրերորդական/ տոկոսային կետի ճշգրտությամբ) տարբերություն:

4.2.2. Եթե Համանման ցուցանիշին անցումը տեղի է ունենում Երկրորդային ցուցանիշից, ապա Ճշգրտվող տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Տ} = \text{Բ} + \text{Հ} + \text{Գ}_{\text{ՀԵ}} + \text{Գ}_{\text{ԵՀ}},$$

որտեղ՝

Տ – Ճշգրտվող տոկոսադրույք,

Բ – Բազային տոկոսադրույք,

Հ – Հավելադիր,

$\text{Գ}_{\text{ՀԵ}}$ – Հիմնական և Երկրորդային ցուցանիշները ճշգրտող գործակից, որը հաշվարկվում է որպես Բազային տոկոսադրույքի Հիմնական և Երկրորդային ցուցանիշների միաժամանակյա հասանելի վերջին 6 /վեց/ ամիսների պարզ թվաբանական միջինների (կլորացված 0.25 /զրո ամբողջ քսանհինգ հարյուրերորդական/ տոկոսային կետի ճշգրտությամբ) տարբերություն,

$\text{Գ}_{\text{ԵՀ}}$ – Երկրորդային և Համանման ցուցանիշները ճշգրտող գործակից, որը հաշվարկվում է որպես Բազային տոկոսադրույքի Երկրորդային և Համանման ցուցանիշների միաժամանակյա հասանելի վերջին 6 /վեց/ ամիսների պարզ թվաբանական միջինների (կլորացված 0.25 /զրո ամբողջ քսանհինգ հարյուրերորդական/ տոկոսային կետի ճշգրտությամբ) տարբերություն: